

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

64-65

NOV 2010

ԲԱՆԳՅՈՒՂԱԿԱԽՐԱՅԻՆ ԹԱՅՐՈՆ

ՀԱՐՎԱԾԱՑԻՆՆԵՐ

ՊԻԵՍ. 4 ՊԱՏԿԵՐՈՎ

391.99

Q-65

Պ Ե Ս Ո Կ Ա Ն Հ Ր Ո Տ Ո Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
8 6 9 6 4 0 6 - 1 9 8 1

20 APR 2006

ԲԱՆԳՅԱՆԴԱԿԱՆԻՄՔՆԵՐԻՆ ԹԱՏՐՈՆ

891.59

12-65

ՀԱՐՎԱԾԱՑԻՆՆԵՐ

Պիես 4 ՊԱՏԿԵՐՈՎ

(Բայ Դմիտրի Մորոզով)

ԹԱԻՍ ՓՈԽ. ԱՇՓԱԼ

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՐՈՎ

1931

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԵՂՈՒՇ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹՈՐԳՈՄ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐՓԻԿ
4. ՍԵԽՈՅԱՆ ՄԻԽԱԿ
5. ԶՈՒԼԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ
6. ԶԱՐՈՒՀԻ
7. ՍԱՐԳՄՅԱՆ ԿԱՐՈ — Բանվոր 35 տ.
8. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ — Դործարկոմի նախագահ:
9. ԲԱԴԱՐՅԱՆ — Կուսկոմի քարտուղար:
10. ՎԱՐԱԶՅԱՆ — Վարպետ:
11. ԹՈՐԳՈՄՅԱՆ — Ճարտարապետ:
12. ԳԱԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ — Զահել գյուղացի:
13. ԳԱՍՊԱՐ ԱՄԻ — Գյուղացի 55 տ.
14. 1-ին, 2-րդ յերիտասարդ, 2 աղջիկ, բանվոր-բանվորուհիներ:

Պիեսում վերցված և փայտամշակման դործարանի յերիտասարդ բանվորության կոխիլը հների գեմ, հարվածայնությունն ու յերիտասարդ ենտուղիաստների հաղթանակը:

Ջրմուղը բեմում կարելի յե շատ հասարակ ձեռվ շինել՝ դեղորների յետեղիլը դնել մի մեծ սամովար լիքը ջրով ու խողովակը հանել դուրս՝ բեմը:

ԳԵՏՅՈՒՄ
ՀՐԱՄԱՐԱԿ. № 1662
ԳԼԱՎԼԻՏ 6233 (Բ)
ՊԱՏՎԵՐ № 2846
ՏԻՐԱԳ 5000

1693
39

ԹԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Բանվորական հաճրակացարանի սենյակներից մեկը։ Յերեք մահմական, սեղան, աքունքներ (տարուրեսներ)։ Անկյունում փայտիկ կամոդ։ Կամոդի վրա—գրքեր, թեյաման, բաժակներ և հայելի։ Սահմանակալներից մեկի վրա նառած ե Զարուիին և նամակ է կարդում։

Դուռը կամաց բացվում ե։ Դուան մեջ յերկուում ե կարս Սարգսյանի դեմքը, ժպտում ե ամախորժ։ Իրեն պահում ե սահճարակ։

ՍԱՐԳՄՅԱՆ—ՄԵԽԱԿ ՀԱ, Զարուհի։

ԶԱՐՈՒՀԻ—(Հանաբով) ՄԵԽԱԿ ԵՄԻ, Հիմա յերկուուղ Ենք։

ՍԱՐԳՄՅԱՆ—(Մտնում ե) Ա.Ի., ապրես։ Չնայած զարաքիլմաեցի յես, բայց մինչեւ տասը գիտես հաշվել։

ԶԱՐՈՒՀԻ—Դարաքիլմաեցի չեմ, աղքիլմաեցի յեմ։ Քա՞նի անդամ եմ առել։

ՍԱՐԳՄՅԱՆ—Ա.Ի., Եղ քիլմաս բառն ե ինձ խարում։ Հաշիվը մեկ է։ Բայց աղջիկ ես իսկական, վոր կա։

ԶԱՐՈՒՀԻ—Լավ, առանց ձեռք առնելու։

ՍԱՐԳՄՅԱՆ—Զեռք առնել չի։ Սա իմ ձաշակի պարզապես վերաբերմունքն ե։

ԶԱՐՈՒՀԻ—Ի՞նչպես։

ՍԱՐԳՄՅԱՆ—ԶՀԱՄԱԿԱԳՈՅՐ։ Պարզ կառեմ։ (Մոտենում ե) Դուք ՀԱ դաւիս ինձ, չետևապես և վերաբերվում եմ։ (Նստում ե Զարուիու կողքին։ Սա արագ բարձրանում ե տեղից ու հեռանում)։ Ի՞նչ ՀԱ վախենում, չեմ կծի։ Վոր գյուղում փետացու ունես, եղ ել գիտեմ։ Նամակը նրանից ե, չե՞։

ԶԱՐՈՒՀԻ—Քեզ ինչ։

ՍԱՐԳՄՅԱՆ—Իսկականի պես ե։ Գրում ե, զրում քո գյուղացին, բայց տակը բան չկա։ Բարեներ ու պրծալ։

ԶԱՐՈՒՀԻ—Եղքա՞նը։

ՍԱՐԳՄՅԱՆ—Ցես ինքս նույնատեսակ նամակներ եմ ստանում գյուղից։

ԶԱՐՈՒՀԻ—Բա ի՞նչ ելիք առում, թե գյուղի հետ կապեր չունես։

ՍԱՐԳՄՅԱՆ—(Կարճ ծիծաղում ե) Ճիշտ ե։ Հանաք արև։ Կապեր

չունեմ : Հերս ու մերս, հեռու լողաց, են աշխարքում
կծում են շինում : Ուրիշ ազգ-բարեկամ չունեմ :

ԶԱՐՈՒՀԻ—**ԴԵ յեկ ու քեզ հավատացիր :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Ի՞նձ :** Հա՛, հա՛... Ով ինձ լավ ե ճանաչում, նա
կարող ե փակ աչքերով նույնիսկ : Այ, թե ով եմ յես, կա-
րու Սարդոյանս : Գործով եմ յեկել մոռող, պարապ տեղը
չէ : Նատիր, լսիր ինձ, քանի Հեղուշն ու Արփիկը չեն յե-
կել : (Զարուհին նստում է) Այդպես ուրեմն : Դու ես գոր-
ծարանը յերկու որ չկա, վոր յեկել ես, բայց աչքիս մի
տեսակ ես յերկում : Ինչի՞ յես խցկվել հարգածային բրի-
գադի մեջ :

ԶԱՐՈՒՀԻ—**Ի՞նչ կա վոր :** Մերոնք բոլորն ել դրվել են :

ՍԱՐԳՄԵԱՆ—**Բոլորն ել,—**բան ասեց : Մատներով կարելի յե ձեզ
համբեկ : Տակն ու վրա չինդ եք : Կոմսոմոլիս Հեղուշը և
կոմսոմոլ Սեխոյանը... եղ յերկուսն իրենց են են քշում :
Հեշտ աշխատանքի յեն վաղում : Ուզում են մեր դլիքն մեծ
դառնալ : Իսկ զու նրանց հետ ի՞նչ դործ ունես :

ԶԱՐՈՒՀԻ—**Ի՞նք գիտես—մըցում ե :**

ՍԱՐԳՄԵԱՆ—(Տնազով) Մըց' ամ ե : Ե՞խ, դու : Եշի պես պիտի
բեռնեն քեզպեսներին ու ախմախ խոսքերով կերպեն :
Գլխի պետք ե ընկնել, այ թե ինչ : Բրիգադում դու շա՞տ
ես հոգնում :

ԶԱՐՈՒՀԻ—**Շատ :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Այ, աեսնո՞ւմ ես :** Տրաքվեն ել, արտադրանքը պիտի
լրիվ ասա : Իսկ վարձատրությունն իջեցրած չափերով :—
Ճի՞շտ ե : Ինքներդ եք հայտարարել այդ չափերը : Պար-
ծննկուսներ : Ճիմա կաշվից ել վոր գուրս դաք-քանի կո-
պէկից ավել շահ չեք ունենա : Ճի՞շտ ե :

ԶԱՐՈՒՀԻ—**Յերկուս ու կեսի փոխարեն—յերկուս ու յոթանասուն :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Եես ել եղ եմ ասում :** Հիմա ասա խնդրեմ, դու ի-
րավունք ունե՞ս քեզ եղաղես չարչարելու : Զունես :

ԶԱՐՈՒՀԻ—**Եես հա անփորձ եմ :** Մնացածները չեն գանդատավում :

ՍԱՐԳՄԵԱՆ—**Սպասիր :** Դու իրավունք ունե՞ս վոտ խփել են բան-
գորներին, վորոնք վոր բրիգադի մեջ չեն : Զունես :

ԶԱՐՈՒՀԻ—**Նրանց ի՞նչ վիսա :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Վիսաից ել վատ ե :** Ազնիվ աշխատավորներին մոր-
թապաշտներ են համարում : Այսինքն թե—ինչո՞ւ նրանք
չին նորմաներից վաղ չեն դալիս ու ավելորդ վաստակը
շան փայ չեն անում :

ԶԱՐՈՒՀԻ—**Ի՞նչ ես ուզում ասել :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Ես եմ ուզում ասել, վոր չինես Հեղուչի ու Արփիկի
նման թեթևողիկ : Կոմունայի մասին են բլբլացնում : Իսկ
իրենք միայն նկարներ կախելով են զբաղվում :** (Ցույց է

տալիս պատմելը) : Եհ, սատանան նրանց հետ : Զարուհի,
թքիր այդ բրիգադի վրա, պրծալ դնաց :

ԶԱՐՈՒՀԻ—**Վոչ :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Չե՞ս ուզում :**

ԶԱՐՈՒՀԻ—**Նրանց հետ լավ ե :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Հմ... Տես, վոր վատ չինի : Հարվածայինների մա-
սին բոլոր ցեխերում վաղուց են խոսում...**

ԶԱՐՈՒՀԻ—**(Անհանգիստ) Սպառնո՞ւմ են :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Այսու ուրախանալու առիթ չի լինի : Իզուր տեղը չի,
վոր սրվել են :**

ԶԱՐՈՒՀԻ—**Պետք ե մերոնց ասել : Գուցե խկապես, վոր մի բան
պատահչի...**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Չե, դու ավելի լավ ե լուս :**

ԶԱՐՈՒՀԻ—**Վո՞նց լրեմ :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Շատ պարզ : Յես քեզ բարեկամաբար գգուշացրի,
վոր գուրս դաս բրիգադից : Մնացածները մեզ ինչ :**

ԶԱՐՈՒՀԻ—**Անպայման կասեմ :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**(Զար, խրոխտ) Գժվե՞լ ես, ինչ ե : Ուզում ես ինձ
անհարմար գրության մեջ ցցել : Վղից բռնած—հարցա-
քննության կտանեն : Իսկ յես ցույց տալու վզչինչ չունեմ :**

ԶԱՐՈՒՀԻ—**Վոր չունես—չխոսելիք :** (Գնում ե կամոդի մաս :
Սարգայանն ունեմերը կիտած լուսի ե : Հետո վերցնում ե
սեղանի վրայից ծրաբը, կարդում) :

ՍԱՐԳՄԵԱՆ—**(Զար) Դու լո՞ւրջ ես ասում :** (Լուրջյուն) Վոր եղ-
պես ե, լավ : Յեթե մի բան գուրս տվիր—հենց եղ որը բո-
պեյասես քո փեսացուին նամակ կուղարկեմ : Ինչ ասես,
վոր չեմ գրի քո մասին : Հասցեն ծրաբի վրա յե : (Ծրաբը
դնում ե գրպանը) :

ԶԱՐՈՒՀԻ—**(Վագում ե դեպի նա) Տուր ծրաբը, տուր :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**(Անցնում ե սեղանի մյուս կողմեր) Այ քեզ :**

ԶԱՐՈՒՀԻ—**(Աշխատում ե մոտենալ նրան) Տուր, ասում եմ, տուր :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**(Զարախինդ ծիծաղով) Հի՛, հի՛, չես բռնի :**

ԶԱՐՈՒՀԻ—**(Նփորության մեջ) Սա ի՞նչ ե : Միթիվ ես տեսակ ան-
խիզներ կան : (Արտավում ե) :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**Հը, ո՞վ հաղթեց :**

ԶԱՐՈՒՀԻ—**(Հուսական վեռականությամբ) Քեզ բաց չեմ թողնի,
բաց չեմ թողնի : (Մարմնով ծածկում ե դուռը) :**

ՍԱՐԳՄԵԱՆ—**(Մտահոգված) Լուր, եղաղես չի կարելի ախր...
(Մտնում ե Սեխոյանը) : Արտաքինում—պնիսախրության
նշաններ՝ մազերը բրջած ու մի կողմ կոկիկ սանրած,
գարշ շապիկ՝ աչք ծակող գալստուկով, լայն, մոդնի շալ-
վար) :**

ՍԵԽՈՅԱՆ—(Զարուհուն) ի՞նչ ես ձենդ գցել սաղ հանբակացարանը:

ՍՍՐԳՅՅԱՆ—(Թոշում և Զարուհու մոտ ու ծրաբը դնում երա բուռը): Ստացիր, ենպես է ձենդ գցել, կարծես թե մորթում են:

ԶԱՄՈՒՀԻ—(Սարգսյանին) Հեռացիր այստեղից:

ՍՍՐԳՅՅԱՆ—(Սեխոյանին) Տեսա՞ր: (Զարուհուն) Դե լով, Զարիկ, մի նեղանար... (Կամաց) Հասցեն առանց ծրաբի յել եմ հըշում: Ձեն վոր հանիր—կդրեմ: (Զարուհին արագ դուրս և գալիս սենյակից, քաշկինակը յերեսին բունած):

ՍԵԽՈՅԱՆ—ի՞նչ ե պատահել դժան:

ՍՍՐԳՅՅԱՆ—Գյուղից նամակ և ստացել, վրդովմունքի մեջ է: Իմ յախիցս կպավ:

ՍԵԽՈՅԱՆ—Մտքովս ել չեր անցնի, վոր եղակես լական է:

ՍՍՐԳՅՅԱՆ—Դե ինքդ տես: Հւա մի բրիգադի յել մեջ եք:

ՍԵԽՈՅԱՆ—Գործի ժամանակ ո՞վ է նկատում:

ՍՍՐԳՅՅԱՆ—Դժվար է կոմսոմոլիսաներիդ գործը: Գործարանը մի կողմից, բջիջը—մյուս: Ժողովներ... իսկ յեթե զվարձանալ ուղենաս—անպատճառ կուտուսական:

ՍԵԽՈՅԱՆ—Բա ուրիշ կերպ վո՞նց:

ՍՍՐԳՅՅԱՆ—Վոյնչ չեմ ասում... Ով ինչպես ուղենա... իսկ մերը պարզ ե՝ աղջիկների հետ առանց մի քաղցրագիտության: Ազատ ժամանակոց հաղողության: Փողով, իշարկե: Յերբեմն ել մեկ-մեկ թաս արադ... թե դեմ չես, Սեխոյան, մեկ-մեկ անցիր մեզ մոտ:

ՍԵԽՈՅԱՆ—Անհարմար ե, իմ տեղը չի:

ՍՍՐԳՅՅԱՆ—Եղպես ել գիտելի, վոր չես դա: Յեթե եկար—գլուխներիս վրա տեղ ունես: Մենք հպարտ մարդիկ չենք: Հեռ չեմ ապրում—գործարանից մեկ կիլոմետր հաղիլ մինի: Մի որ գուցե կանցնե՞ս...

ՍԵԽՈՅԱՆ—Ճիշտն ասած, չգիտեմ: Տեսնեք, գուցե անցնեմ...

ՍՍՐԳՅՅԱՆ—Հենց եսոր կարող ես...

ՍԵԽՈՅԱՆ—Եսոր չի հաջողվի: Գիշերային հերթումն եմ: Բայց դու չկարծես, թե ուղում եմ ձեզ մոտ հարբել, կամ մի այլ բան: Չուտ ենպես, ելի, հետաքրքրության համար:

ՍՍՐԳՅՅԱՆ—Հասկանում եմ, հասկանում:

ՍԵԽՈՅԱՆ—Ճիշտն ասած, շատ անզամ տխուր ե լինում: Ուղում ես մի ինչ վոր հետաքրքրի, անսովոր բան: Աշխատանք ինչքան ուղես, իսկ գեղեցիկ կյանք չկա: Ձեզ մոտ ել, իշարկե, են չի...

ՍՍՐԳՅՅԱՆ—Պարզ ե: Բայց յերբեմն մենք չենք զրկում մեզ...

ՍԵԽՈՅԱՆ—Այ, հենց եղ ե: Իմ կարծիքով, պետք ե, վոր մարդ յերբեմն, ենպես, ելի, առանց քաշվելու...

ՍՈՒՐԳՅՅԱՆ—Բաշվելու մասին մեր կամպանիայում խոսք չի կարող լինել: (Ականջ է դնում) Կարծես, զալիս են: Յերկար մնացի, գնամ: Աւրեմն—սպասում ենք: (Դուան մեջ հանդիպում ե Արփիկին ու Զուլամյանին: Թերեւ բարեկում ե նրանց գլխով ու արագ հեռանում):

(Մոխամ են Արփիկին ու Զուլամյանը: Արփիկը փոքր, կենդանի մի աղջիկ է, կարև խուզած մազերով: Զուլամյանը՝ յերկար, զգազված մազերով, բանվորական զգեստ: Նարծումները պարզ):

ԱՐՓԻԿ—(Սեխոյանին) Սարդայանն ինչո՞ւ յեր յեկել:

ՍԵԽՈՅԱՆ—Զարուհու մոտ նստած եր:

ԱՐՓԻԿ—Զարուհին զորտեղ ե:

ՍԵԽՈՅԱՆ—Ես կողմերին ե...

ԱՐՓԻԿ—(Դուանից կանչում ե) Զարիկ, Զարիկ: (Երանց) Եղ մարդուց պետք ե հեռու մնալ: (Դուրս և գլխի):

ԶՈՒԼԱՄՅԱՆ—Լսել ես, ինչ ե պատահել զործիքների պահեստում:

ՍԵԽՈՅԱՆ—Այս: Ենտեղից մի ամբողջ արկղ զործիքներ են թրոցքել:

ԶՈՒԼԱՄՅԱՆ—Դա յերեկ եր, իսկ եսոր... Սկանդալ: Ո՞ւ—ո՞ւսիս:

Արփիկի յերեսից... ինքդ զիտուս, թե ինչ փականագործներ կան Արփիկի ցեխում... Արխատկրատներ վրատկով, ուփելի ճիշտ—գնահատությամբ: Ամեն մնին ամսական յերկու հարյուրից ավել և խփում: Բրիգադների մասին խոսք ել չկա: Յեկ հանկարծ աշակերտուհի չովսեփյանը, ձնձուկի մեկը, կարողացել է ամերիկական բանալիին ավելացնել ինչ վոր մասիր ու թրքիկ—դիմում: յերկու համարների արժեքներն իշեցնում ե կիսով չափ:

ՍԵԽՈՅԱՆ—(Զարմացած) Կիսո՞վ:

ԶՈՒԼԱՄՅԱՆ—Այս, ոյս... վո՞նց ե, հը: Եղ հլա բոլորը չի: Արտադրանքի նորման կրկնակի վեր և թոցքել:

ՍԵԽՈՅԱՆ—Միթե՝ իւելի մոտ բան է: Պետք ե ապացուցել:

ԶՈՒԼԱՄՅԱՆ—Եսան ե նրանումն ե, վոր արդեն ապացուցել ե:

ՍԵԽՈՅԱՆ—Իմ կարծիքով, դա չափազանցություն ե...

ԶՈՒԼԱՄՅԱՆ—Ի՞նչ ե, Սեխոյան, զժգո՞չ ես:

ՍԵԽՈՅԱՆ—Մեր ուժերի մասին եմ մտածում: Զափից դուրս մինի:

ԶՈՒԼԱՄՅԱՆ—Այսինքն...

ՍԵԽՈՅԱՆ—Դե... Ենու լինի, վոր ուժից չընկնենք:

ԶՈՒԼԱՄՅԱՆ—Այ գու խրավիլակ:

ՍԵԽՈՅԱՆ—Դե, զե, կարգին:

ԶՈՒԼԱՄՅԱՆ—Դրանից թունդ պետք ե քեզ հայշոյել: Քանի վար կոմսոմոլի մեջ ես, պետք ե իմանաս և ենինի խոսքերը՝ «Կոմսանիդմն ոկովում և այնտեղ...»:

ՍԵԽՈՅԱՆ—Գիտեմ . . .

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Մի ընդհատիք: Վաս գիտես: Լսո՞ւմ ես . . . «սկզբա-
վաւմ ե նետել, զորուեղ առաջ և գալիս չարքային բանկոր-
ների անձնապահ, ծանր աշխատանքը հաղթահարող, հոգա-
տար վերաբերմունքը արտազրողականությունը բարձրաց-
նելու համար»: Անձնաղոհ: Իսկ դու վախենում ես պոր-
տից պոկել:

ՍԵԽՈՅԱՆ—Դու ինձ սխալ հասկացար: (Մտնում են Արքիեպ ու
Զարուհին):

ԱՐՓԻԿ—Մեր Զարփիկի քիթը կախ է: Զգիտեմ ինչ ե պատահել . . .
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Յեկ ուրախացնեմ:

ՍԵԽՈՅԱՆ—Յեկ ել կարող եմ:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Լավ կլինի, վոր ուժերդ ինայես:

ՍԵԽՈՅԱՆ—Դե բոլ ելավ:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Լավ, լավ: Ապա, չաստուշկաներից . . .

ՍԵԽՈՅԱՆ—Յերդել չեմ կարող:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Յես ինքս մենակ . . . (Զարուհուն) Քիթու բարձր
բարձր:

ԶԱՐՈՒՀԻ—(Ժպում ե) Ոյին տղա յես . . .

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Ինքը՝ լելոն Զուլամյանն ոյին և, բայց յերդերը
ուրախ: (Յերգում ե ու պարում):

Մի որ յարս մոտս վազեց,
Հնդամյակից եր խոսում,
Սիրտս համբուրել ուղեց,
Լսել անդամ չի ուղում:
Հնդամյակը—հինդ տարի,
Այս խնդիրը կլուծենք,
Եւ, ուժերդ դու լարի,
Մեկ տարին քեզ կրաշխենք:

ԱՐՓԻԿ—Գուցե և ավելին:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—(Միծարում ե) Քո ախորժակին յեթե նայենք—յե-
րեք տարին ել բոլ ե: Յերեւում է, վոր քիչ են հայհոյել
քեզ . . . (Զարուհուն) Տեսնեյիր, թե վոնց Եյին հուզ տվել
Արփիկին իրենց ցեխում:

ՍԵԽՈՅԱՆ—Ինձ թվում ե, թե նախորդք պետք ե ցեխում հող
պատրաստել, ադիտացիա տանել: Հետո միայն դուրս գալ
գործնականորեն:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—(Ցնազով) Քաղցր խոսքեր են: Քո կողմից, Արփիկ,

ԱՐՓԻԿ—(Սեխոյանին) Յեթե գործարկում ու ցեխուրուն լուել են

ձկան պես, ուրեմն մենք ե՞լ ձեռներս ծալած նստենք: Նե-
րողություն: Ներկա դնաւատումներով, գործիքների ցե-

խում կատարյալ պլոկողականություն ե և վոչ թե աշխա-
տանք:

ՍԵԽՈՅԱՆ—Իսկ հիմա կսկսեն յերկար պատմություն, կկատաղեն:
Դե յեկ ու եշը ցեխից հանիր:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Այ, ինչ սարսափելի յե: Քեզ մնում ե գործարանից
փախչել:

ՍԵԽՈՅԱՆ—(Նեղացած) Բոլ ե ձեռք առնես: Յեթե մոտեցումը ուր-
իալ ե, կարո՞ղ եմ յես քննադատել:
ԱՐՓԻԿ—Կարող ես:

ՍԵԽՈՅԱՆ—Մանավանդ, վոր յես ինքս հարվածային եմ:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Չնայած դրան, թարս ես խոսում:

ՍԵԽՈՅԱՆ—Այսինքն:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Այս, վոր յեթե քո ասելով շարժվենք, նոր բրիգադ-
ների յերես չենք տեսնի: Մեր գործարանում զեկավարու-
թյունը թուլացել է: Իսկ ներքեւից, մասսայից, նոր ու նոր
ուժեր են դուրս դալիս: Իսկ դու ասում ես՝ սպասեցեք:
Սրա նմաններին (ցույց ե տալիս Արքիեպի վրա) շղթայով
կապե՞նք, ինչ ե:

ԱՐՓԻԿ—Զի հաջողվի կապել (ծիծառում ե):

ՍԵԽՈՅԱՆ—Անհատներով հեռու չես գնա:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Ճիշտ ե: Մյուս ցեխերումն ել հատ ու կենոն ելին:
Դժվարը սկիզբն ե: Այ, տեսնո՞ւմ ես, գործիքների ցեխը
շարժվեց տեղից, մյուսներն ել կշարժվեն:

ԶԱՐՈՒՀԻ—Իսկ յեթե չչարժվեն, կատաղեն . . . և ժամանակ . . .

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Ի՞նչ (Զարուհին լրում ե):

ԱՐՓԻԿ—(Սեխոյանին) Քո քննադատություններով խեղճին վա-
խեցրիր:

ՍԵԽՈՅԱՆ—Յես հո չեմ ասում, վոր պետք ե վախենալ . . .

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Եղաղես ել կարելի յե հասկանալ:

ԶԱՐՈՒՀԻ—Յես վաղուց ելի իմացել, վոր ցեխերում հարպածա-
յինների մասին վսիսոցներ են լսվում:

ԱՐՓԻԿ—Ո՞մից ես լսել:

ԶԱՐՈՒՀԻ—(Մամծմելով) Զեմ հիշում . . . Մի քանիսից . . .

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Փակոսմ են: Ի՞նչ արած: Բոլոր բանվորներն են
հո մեկ խմորից չեն: Յեթե մի սրբիկա գրպանում քար ե
պահում, դա չի նշանակում, վոր պետք ե լոել: Թող փոր-
ձի խիել: (Բնությօք խփում ե սեղանին):

ԱՐՓԻԿ—Ճիշտ ե, լելոն:

ՍԵԽՈՅԱՆ—Իսկ և իսկ պիհասայից ե:

ԶՈՒԼԱՄՑԱՆ—Վոչ, ահա այստեղից ե (ցույց ե տալիս կարծքը):

ԱՐՓԻԿ—(Կտրուկ) Սեխոյան, չե՞ս ամաչում:

ԶԵԽԱՅԱՆ—ԴԵ լավ՝ հանար արի: Առայժմս: (Գևորգ եղիպի
 դուռը):
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Բարի ճանապարհ: (Սեխոյանը գևոր ե): Տղան
 կարծես թե շեղվում ե: Կանոնավո՞ր և աշխատում:
ԶԱՐՈՒՀԻ—վաշինչ, լավ և աշխատում: Մի ըրիգաղայի մեջ ենք:
ՅՐՓԻԿ—ԻՆչ վոր գեղեցիկ կյանքի մասին և յերազում...
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Վատ ե, յեր գլուխն ու ձեռքերն իրար չեն բըու-
 նում:
ՅՐՓԻԿ—ԴԵ, չիմա տեսնենք, թե ի՞նչ ելիք ուզում ցույց տալ:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Ճա, հա... Սա դեռ գաղտնիք ե:
ՅՐՓԻԿ—(Զարուհուն) Ենս... ճիշտն ասած... Գուցե գեռ-
 ժամանակը չե...
ՅՐՓԻԿ—ԴԵ դու մի քաշիր: Զեմ ասի ուրիշն:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Ճա, հա... Սա դեռ գաղտնիք ե:
ՅՐՓԻԿ—(Զարուհուն) Ենվոնի նոր գյուտն ե: Մարդու րան չասես:
ԶԱՐՈՒՀԻ—ի՞նչ ես խոսում: Ամէլի շուտ լեզուս կիտում:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—(Գրպանից համում ե գյուտի գծանկարը և փոռմ
 սեղանին): Ահա: Մանրամասն, համարակարած և ալլն:
 Սա ուրիշ վարխանտ ե: Հնձող մեքենայի ու փոցիսի գծա-
 դիրը: Բայ իմ կոնսարուկցիայի, այդ յերկու մեքենան
 ժիացվում են: Փորձել եմ, աշխատում են անհման: Վաղը
 վերջին փորձն ել ու—պրծավ:
ՅՐՓԻԿ—Կեցցես: Իսկ վո՞րքան և տնտեսում:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Յուրաքանչյուր մեքենայից 1 ո. 75 կ. անաեսվում
 ե: Մեկ տարում մեր զործարանը կտնտեսի 143·200 ո.
ՅՐՓԻԿ—143·000 ռուրլի:
ԶԱՐՈՒՀԻ—Տեր ասովիած:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—(Վոգեվորված) Յեվ 200 ռուրլի: Ճը, վո՞նց ե:
 Բանվոր լեվոն Զուլամյանը հսկայական գումար կտնտեսի
 պրոլետարական պետության համար: Ուսա՞... (Բանում
 ե աղջկենթին ու հետեւը փոռում սենյակի մեջ: Մտնում
 ե Հեղուշը, ամբակամ, առողջ աղջիկ):
ՀԵՂՈՒՇ—(Ուրախ) Յերեկի քիչ եք բեռնված, վոր թոշում եք, հա՞:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—(Զինվորական բարեվալ) Բարե ձեզ, ընկեր կա-
 րապետյան: Առաջին հարվածային բրիդադայի պետ:
ՀԵՂՈՒՇ—Աղատ:
ՅՐՓԻԿ—Ճատ մի ազատություն բանեցնի: Քիչ մնաց կոֆտայից
 թեվը փոթեյիր:
ԶԱՐՈՒՀԻ—Ինձ ել մի տեղ ճղվեց:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Կճղվի—նորը կառնեք: (Զարուհին հագնվում ե):
ՀԵՂՈՒՇ—Թ՛ւր:
ՅԱՐՈՒՀԻ—Գրադարան: (Գրքերը ձեռքին հեռանում ե: Գոան մեջ

հանդիպում ե Գեվորգյան Թորգոմի ենտ, լուր բարեւում
 են իրար ու բաժանվում):
ԹՈՐԳՈՄ—(Դրսից) Մարդ ներս թողնում եք:
ՀԵՂՈՒՇ—Թողնում ենք: (Թորգոմը ներս ե մտնում: Առողջ, լայն
 ուսերավ յերիտասարդ, կաշվե կուրտկայով):
ԹՈՐԳՈՄ—Իմ ջերմություններն աղջիկներին: Լեվոն, բարե:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Բարե, թորգոմ:
ԹՈՐԳՈՄ—(Հեղուշին) Հետեւցդ վազեցի, բայց չհասա: Համա-
 քայլում ես, հա՞:
ՅՐՓԻԿ—(Ուրախ) Յես նրա հետեւց միշտ թուչկոտելով եմ վազում:
ԶՈՒԼԱՄՑԱՆ—Ճնճղուկի նման (Ճիծաղում ե):
ՀԵՂՈՒՇ—Դրա փոխարեն, ցեխում բարձր ե թոչում: Առաջինն ե:
ՅՐՓԻԿ—Լավ, վերջ տուր: Մի մեծ բան չի:
 (Ներս ե վազում Զարուհին, վրդովլած ե):
ԶԱՐՈՒՀԻ—Աղջիկներ, ես ի՞նչ խայտառակություն ե:
ՅՐՓԻԿ—Ի՞նչ ե պատահել:
ԶԱՐՈՒՀԻ—Ճուլարանում, պատի լրացրի կողքին մի տոմսակ են
 կպցրել: Նույնը և գործարանի գլխաւոր մուտքի վրա: Ես
 մեկը տղիրքը պոկեցին: Ահա նա: Մեր մասին ե: (Համում
 ե գրպանից քուլք-ն ու հանձնում Հեղուշին):
ՀԵՂՈՒՇ—Սա ի՞նչ ե: Նույնիսկ վոտանավո՞ր: (Կարդում ե):
 Այդ ո՞վ ե գործարանում
 Ստոր գողություն անում,
 Ա՞ւմ ձեռքերն են սեվ
 Գողանում թեթել:
 Մեզ մոտ աղջիկներ կան,
 Ակախիկ—կուսակցական,
 Յերեկը աշխատում են,
 Գէշերը գողանում են:
 Գրածու լայլ իմացեք,
 Ի գիտություն ուրիշին՝
 Մեր ցեխում գող ճանաչեք
 Արթիկն ու Հեղուշին:
ՅՐՓԻԿ—Թյուր, զզվելիներ:
ՀԵՂՈՒՇ—Ռոզում են ցեխուել մեզ, բայց իդուր:
ԶԱՐՈՒՀԻ—Իսկ ասեկասեներն արդեն սկսվել են: Վո՞նց անենք:
ՀԵՂՈՒՇ—Վոչինչ, Զարիկ: Թեհ զզվելի յի, բայց սարսափելի չի:
 Ինչպես վոր հարկն ե—կպատասխաններ:

ՊԱՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Բեմի խորքում, մեջ տեղը՝ գրծարանի գրասենյակը։ Ազ՝ կոռպի կրպակ։ Հանդիսականներին յերկում ե կրպակի մի կողքը լուսավորված։ Զախ՝ եին ցանկապատի նաղեր։ Յերեկո յե։ Խանութի և նաղերի մեջտեղ, դրաւմ վառած լապտեր։

Զախից մտնաւմ են յերկու յերիտասարդ բանվորներ, կիսահարքած, իրար գրկել են ու զիշ յերգում են։

ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴԻՆԵՐ

Աղջիկներ ջան, աղջիկներ,
ինչ աչքեր են, ինչ ուսեր։
Ում համար եք դուք ծնվել,
Մեղ համար եք մեծացել։

1-ԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Սպասիր, Սերդո։ Բոլ ե մուլ փողոցում
քարչ դանք։ Ճղենք ակումբ։

2-ՐԴ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Ռադիո լսելու։ Միտք չունի։ Յես այնպիս
գոռամ, վոր ռադիոյից ել բարձր։

1-ԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Դե վոր այդպես ե, քենք կարո Սարդոյանի
մոտ։ Լավ տղա յե։ Մերոնք չուտ-չուտ են լինում մոտը։
Արագ ել կանենա։

2-ՐԴ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Հրաշալիք միտք ե։ Քեփ մինչեւ վերջը։
(Յերգելով հեռանում են)։

Աղջիկներ ջան, աղջիկներ,
ինչ աչքեր են, ինչ ուսեր...

ՍՍՐԳՍՅԱՆ—(Մտնում ե) Ի՞նչ եք գոռզոում գործարանի մոտ։

1-ԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Քո ի՞նչ գործն ե։ Նկատողություն անողի
քթին են տալիս։

2-ՐԴ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Սպասիր, կարծես թե կարո Սարդոյանն ե...

ՍՍՐԳՍՅԱՆ—Հենց նա յե, վոր կա։ Հա՛, հա՛, հա՛։ Տեսա՞ը,
վոնց վախեցրի ձեզ։

1-ԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Անոնք տուր, սուփեն բաց արա։ Քեզ մոտ
եինք գալիս...

ՍՍՐԳՍՅԱՆ—Խնդրեմ։ Մեկին ուղում եմ տեսնել։ Դուք պնացեք—
կասնեմ ձեզ։

2-ՐԴ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Աղջի՞կ ե, հը։

ՍՍՐԳՍՅԱՆ—Եեխ ու միրուքով... Դե, ժամանակ միք իսրցնի,
գնացեք։

1-ԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Տես, չուշանաս։

ՍՍՐԳՍՅԱՆ—Լավ, շարժվեցեք։ Բայց սպասիր... Կոնճե՞լ եք ելի։
Ուրախությունից ե, թէ սրտնեղությունից։

2-ՐԴ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Դժվար ե հասկանաւ։

ՍՍՐԳՍՅԱՆ—Յերկում ե, վոր սրտնեղությունից ե։ Լավ ոյին
խաղաց ձեր գլխին հովսեփյան Արքիկը։

1-ԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Յես նրա են...

2-ՐԴ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Նրան մի կուշտ սրհնեցի մորից բռնած։
Քոստի մեկը։

ՍՍՐԳՍՅԱՆ—Գիտեմ, վոր հայհոյել կարող եք, բայց ի՞նչ ոգուտ։
Հայհոյանքը վկից չես կախի։ Ուրիշ բան ե պետք եստեղ։

1-ԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Ի՞նչ։

ՍՍՐԳՍՅԱՆ—Պետք ե ենակն անել, վոր մյուսների ախորժակն ել
ենի... Վախեցնել պետք ե մի քիչ։

2-ՐԴ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Վախեցրիր, յախիցդ վազ չեն գա։

ՍՍՐԳՍՅԱՆ—Հը, սրտներդ դո՞լ ընկալ։

1-ԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Թե միջոցը գիտես, —խորհուրդ տուր։

ՍՍՐԳՍՅԱՆ—Շա՞տ եք խմել։

2-ՐԴ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ—Յերկուսով մի շիշ...

ՍՍՐԳՍՅԱՆ—Խսկույն յերկում ե, վոր մի բաժակ եք խմել, բայց
տասը կվարտի քեֆ եք անում։ Դա լայ։ Պետք ե խելըը
գլխին գործել։ Դիտակցարաք։ Գնանք։ Ահա եսպես, զան-
կապատի տակով։ Գիշերներն ենտեղ հատ ու կենտ մար-
դեկ են պատահում։ Դե, շտապեցեք։ (Հեռանում են)։

Գրասենյակից դուրս են գալիս վարազյանը՝ միջին
տարիին, միրուքով, ձեռնախյուղ և նահապետյանը՝
հասակավոր բանվոր, մտահոգված դեմքով։

ՎԱՐԴՅՉԱՆ—(Վրդովլած) Շատ անհամարի յե, ընկ։ Նահա-
պետյան, թե ինչո՞ւ եղ տեսակ գատարկ բաներով ինձ եք
դիմում։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ—Յերբ մտա ցեխը...

ՎԱՐԴՅՉԱՆ—(Ծաղրավ) Վոր քննինք այդ կարևոր գեղաքը, հա՞։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ—Վոչ, բալորովին այլ գործով, բայց ինձ մի քանի
բանվորներ հայտնեցին, վոր գուք կարգացել եք հանրա-
կացարանում ապրող աղջիկների մասին գրած տոմսակը։

ՎԱՐԴՅՉԱՆ—Զեր ասելով, յես չե՞լի կարող կանգ առնել պատի-
լուղթի տառջ։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ—Կարդացել եք ու մի քանի խոսքով հայտնել ձեր
դուռընակությունը։


ՎԱՐԴՅՉԱՆ—Մուռ։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ—Գուցե։ Յեվ ահա ինձ զարմացրեց այն բանը, վոր
դուք վոչ մի միջոց ձեռք չեք առել։ Դրա համար ել զի-
մեցի ձեզ։

ՎԱՐՄԶԱՆ—Այդպես: Աւրեմն, վարպետի վրա դրվում է մի նոր
 պարտականություն՝ հսկել պատի թերթին։
**ՆԱՀԱԳԵՏՅԱՆ—Հսկել ցեխում կարգապահությանը՝ նոր պարտա-
 կանություն չեն Յեթե ավյալ դեղքում տեղի յեւ ու-
 նեցել մի խայտառակի... .**
ՎԱՐՄԶԱՆ—Դա չէին բան եւ, բնկ. Նահապետյան: Յես արդեն
 ասեցի, վոր...
ՆԱՀԱԳԵՏՅԱՆ—Շատ թեթև եք նայում այդ գործին, ընկ. Վա-
 րպյան։ Ախր յերիտասարդությանը հրապարակով մեղա-
 դքում են գողության մեջ։
**ՎԱՐՄԶԱՆ—Լավ, յենթաղբենք, թե յես հանկարծ պոկելի առմ-
 ակը։ Այն գեղքում դուք, իբրև զործարկոմի նախադահ, Հարց չեցիք բարձրացնի։ վորուեղ եւ ինքնաքնաղատու-
 թյունը։**
**ՆԱՀԱԳԵՏՅԱՆ—Դուք ինչ ե, իրո՞ք չեք տարբերում ինքնաքնա-
 դատությունը ախաչկարա մեղադրանքից։ Յեթե մեկն ու-
 ղում ե մի բան ասել, թող պարզ գուրս գա ու հայտնի և
 փոք թե անստորագիր թղթեր կցցնի պատերին։**
**ՎԱՐՄԶԱՆ—Այդ բորբն ինձ չի հետաքրքրում։ Յես արտադրու-
 թյամբ եմ զբաղված, իսկ դուք գատարկ բաներ եք խո-
 սում։ Բոլորպին մասնավոր զրույց եք սկսել։**
**ՆԱՀԱԳԵՏՅԱՆ—Յես ձեզ հոսում եմ իբրև գործարկոմի նա-
 խադահ։**
**ՎԱՐՄԶԱՆ—Ա՛խ, այդպե՞ս... Յես, իհարկե, յենթարկվում եմ
 գործարկոմին։ Վազը պաշտոնապես հաշիվ կտամ։ Իմ
 ստորագրությամբ։ Նույն լավ միջակի մեջ ե յիշ վոր ար-
 տադրություն։**
**ՆԱՀԱԳԵՏՅԱՆ—Խոսքը մեր մեջ, արտադրության ինքնարժեքն
 ենքան ել... լավ, եղ թողնենք։ Յեթե մեկը կարող ե հո-
 գիլ տալ—ուրեմն վատ չի։ Դուք ել հանդիսան կինքն, մե-
 նաք ել։**
**ՎԱՐՄԶԱՆ—Հա, հա, հաշիվ կտամ։ Յատեսություն։ (Գուրս ե
 խանութի կողմը։ Նահապետյանը դեպի ձախ։ Գործարանի
 սուլոցը։ Ցանկապատի կողմից յերևում ե Զարուհին, մի
 հասակափոք բանվարուհու հետ։)**
**ԶԱՐՈՒՀԻ—Հազիվ գուրս յեկանք։ Ես ճանապարհը թեև մութն ե,
 բայց մեր հանրակացարանի՝ ամենակարճը։ Դե, վաղիք,
 բոթոթիդ համար կարկանդակ առ։ (Բանվարուհին ուղղու-
 մում ե դեպի կրպակը)։**
**ՍԱՐԳՅԱՆ—(Գուրս ե գալիս մքության միջից) Բարե, աղքիթ-
 ուեցի գեղեցկուհի։ Տեսնո՞ւմ ես, հիմա չեմ շփոթում։ Հը,
 Հո դուրս չես ավել։**
ԶԱՐՈՒՀԻ—Զե... .

**ՍԱՐԳՅՅԱՆ—Այդուես։ Իսկ բբեղաղից գուրս դալու մասին մտա-
 ծե՞լ ես։**
ԶԱՐՈՒՀԻ—Վոչ։
**ՍԱՐԳՅՅԱՆ—(Հերսու) Ինչովես թե վոչ։ Կարծեմ լսել ես, թե ինչ
 պառուղներ են։ Քո մասին ել կոկսեն խոսաւ։**
**ԶԱՐՈՒՀԻ—Ախր սուս են խոսում նրանց մասին։ (Կրպակի կողքով
 անցնում ե Հեղուշը)։**
**ՍԱՐԳՅՅԱՆ—Մ' պաշտպանիր։ Մեղալ չես ստանա։ Այ, կգրեմ քո
 մասին գոյուղ։ Քեզ ժամանակ՝ մինչև վաղը։ Զմոռանաս։**
ԶԱՐՈՒՀԻ—(Բարձր) Հեղուչ։
**ՍԱՐԳՅՅԱՆ—(Յանկու ք-քում ե) Ս... ս... ս... Լեզուդ քեզ
 քաշի, ի՞նչ ես գոռում։ Նրա հետ չեմ ել ուզում հանդի-
 պել։ (Արագ ծղկում ե դեպի ձախ)։**
ՀԵՂՈՒՇ—(Մոտենում ե) Սարդոյա՞նն եր։
ԶԱՐՈՒՀԻ—Նա։
ՀԵՂՈՒՇ—Քեղնից վազ չի զալիս։ Ի՞նչ եր ասում։
ԶԱՐՈՒՀԻ—(Նիոքվելով) Հենց ենակես... .
**ՀԵՂՈՒՇ—Տես, նրան շատ չհավատաս։ (Ուղղվում ե դեպի գոր-
 ծարան։ Դրասենյակից դրւս ե գալիս Գեղորգյանը)։**
**ՀԵՂՈՒՇ—Իմացե՞լ ես, Թորգոմ, ինչեր են տարածել մեր մասին։
 ԳԵՎՈՐԳՅԱՆ—Սըկեաներ են, ուրիշ վոչինչ։**
**ՀԵՂՈՒՇ—Պատասխանատվության պետք ե կանչել, բայց մեյլան
 չեն զալիս։**
**ԳԵՎՈՐԳՅԱՆ—Գիտեն, վոր վատ կլինի։ Իսկ դուք արժեք միք տա-
 ել ամելի յեռանդով աշխատեք։ (Հեղուց լսվում ե կա-
 նացի նիչ)։**
ՀԵՂՈՒՇ—Կաց, ստ ի՞նչ ձայն ե։
**ԳԵՎՈՐԳՅԱՆ—(Լուսում ե) Վո՞րաեղ ե։ (Նորից նիչ)։ Կարծեմ ցան-
 կապատի մոտ ե։ (Կանացի ձայն։ «Ոզնեցեք, ոզնեցեք»)
ՀԵՂՈՒՇ
**Ե՛ս, մի բան ել չկա, վոր ձեռու առնեմ։ (Նայում ե շուր-
 ջը։ Հեղուշը նրա հետևից։ Գեղորգյանը կանգ ե առնում)։
 Վոչ, զու մի գա։ Մելիցիոներ կանչիր։ (Գուրս ե վազում։
 Հեղուշը ուղղվում ե դեպի գրասենյակը)։**
ՀԵՂՈՒՇ—Ողնոցե՞ք, այնուեղ մարդ են ծեծում։
 (Յերկու բանվոր շտապ հետեւկում են Գեղորգյանին։
 Կարե լուրբ-յուն։ Ցանկապատի կողմից ներս ե վազում
 Արփիկը։ Հալավիվում են մի խումբ բանվոր-բանվորու-
 իններ)։**
**ԱՐՓԻԿ—(Հոգված, ընդհատ ձայնով) Սըկեաներ, բռնեցին... Հա-
 զիվ պրծա ձեռքերից... Քարով մեծքիս հասցըին... Ո՛...
 ո՛... ի՞նչ սոսկալի յե ցալում։ (Կանաչում ե։ Նրան գքր-
 կում են։ Գործարանի 2-րդ սուլոցը)։**

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո Ի Յ Բ



ՊԱՏԿԵՐ ՅԵՐՐՈՐԴ

Դործարանի հանրակացարանը : Սեղան, տարբուրետներ : Պլատայի վրա—թեյամաններ : Պատերին պլակատներ՝ «Պահպանիք մաքրուրյուն», «Զեռքերդ մատուր լվա», «Մի կեղտուտիք զրմուղը մընացորդներով» : Զրի խողակակի (ծորակի) մոտ պատից կախված են մի քանի յերեսարքիչներ : Գեղի միջանցք տանող դուռը բաց է :

Սեղանի առաջ նստած ե Արփիկը գիրքը ձեռքին : Մտնում է Հեղուշը վերնազգեստով :

ՀԵՂՈՒՇ—ԻՆՉՈ՞ւ չես պառկում :

ԱՐՓԻԿ—Դե, յես ենքան ել վատ չեմ :

ՀԵՂՈՒՇ—Ցավո՞ւմ ե :

ԱՐՓԻԿ—Ցավում ե . . . Քիչ . . .

ՀԵՂՈՒՇ—(Կշտամբում ե) Գիտեմ քո «քիչը» . . .

ԱՐՓԻԿ—Այ, ուսս միայն շտկեմ . . . Վաղը կարելի յե արդեն դործի գնալ :

ՀԵՂՈՒՇ—Ելի սկսեց : Իզուր տեղը չեն քեզ տվել չորս որմա բյուլ-լետներ : Նստիր տեղդ հանդիսաւ : Նորություն լսե՞լ ես :

ԱՐՓԻԿ—Ի՞նչ ե :

ՀԵՂՈՒՇ—Լեվոն Զուլամյանի ձեռքը մնացել և մեքենայի տակ :

ԱՐՓԻԿ—(Վշտահար) Ի՞նչ ես ասում : Ծա՞նը ե վնասվել :

ՀԵՂՈՒՇ—Բարերախտաբար վոչ : Մեկ ժամն ե միայն ճզմվել : Զարագործներն աննկատելի կերպով հանել եյին պաշտպանիչ ցանցը . . . Վեսնի թեն ընկնումե մեքենայի տակ ու . . .

Իսկ կողքին կանգնած յերկու տղաներ ծիծաղում են :

Մարդու ձեռքը ջարդվում ե, իսկ նրանք ծիծաղում են :

«Այդպես ել պետք ե, —ասում են, —հարվածայինին» :

Բայց բանվորները հուպ տվին նրանց ուղածիդ պես :

ԱՐՓԻԿ—Զգվելիներ, վնասաբարներ :

ՀԵՂՈՒՇ—Հիմա ակումբում լիքը ժողովուրդ ե : Զուլամյանի հետ պատահած դեպքն են քննում :

ԱՐՓԻԿ—Իսկ դու ինչո՞ւ չես գնացել :

ՀԵՂՈՒՇ—Քեզ մոտ եյի շտապում : Լեվոնի մոտից եմ գալիս : Նոր քնեց : Մի աղետյալից—մյուսը :

ԱՐՓԻԿ—Շնորհակալ եմ : (Մտնում ե Գեղօրգյանը) :

ԳԵՂՈՒՇՑԱՆ—(Վոզկուրված) Այ քեզ ո՞ր : Դեռ յերեկ դործարանում վրդովվում եյին անհատները, այսոր՝ առավոտյան՝ խմբակները, իսկ հիմա վրդեռության ալիքը ծածկեց բոլորին : Մեխանիքական ցեխն իրեն հայտարարել ե հարվածային : Հավաքական ցեխումն ել . . .

ՀԵՂՈՒՇ—Հիմանի յե :

ԱՐՓԻԿ—(Հրճվանիքով) ԲՇ :

ԳԵՂՈՒՇՑԱՆ—Այո, այս . . . Այ քեզ թափի : Անձման ե : Գործարկում ցիների ծուխը կհանենք պնչերից : Թե զեկավարելու յեք համբցեք մելուան : Թույլ չենք տա, վոր թշնամիներն անպատճեն, ծեծեն ու արատավորեն մեր ընկերներին :

ՀԵՂՈՒՇ—Ըստհանուր գործարաններին ժողովը յե՞րը ե :

ԳԵՂՈՒՇՑԱՆ—Վաղը : Գործարանի վարչությանն ել բանդին կհասնի : Վաղակիտայով ձգձգում եր սոցմբցումը :

ՀԵՂՈՒՇ—Դե, չուտ թեյ խմենք ու հայդու դեպի ակումբ : Մինչև մեր հերթը գեռ ժամանակ կա :

ԱՐՓԻԿ—Յես ել կրամ :

ՀԵՂՈՒՇ—Քեզ չի կարելի : Արփիկ :

ԳԵՂՈՒՇՑԱՆ—Վոչինչ, կարելի յե : (Արփիկին) Գլուխող չի՞ ցավում :

ԱՐՓԻԿ—Վոչ :

ԳԵՂՈՒՇՑԱՆ—Վոր հոգնեցիր, շալակով հետ կրերեմ : (Ծիծառում ե) :

ԱՐՓԻԿ—Շնորհակալ եմ, թորդոմ : Քանի՛ յերբորդ անդամն ե, վոր դու ինձ վիրկում ես :

ԳԵՂՈՒՇՑԱՆ—Դե, աման-չամանը դրստեցեք : Իսկ յես մի քիչ լվացվեմ ու պրծավ : Քարբնոցը սովորեցրել ե ջրի հետ գործ ունենալ :

ՀԵՂՈՒՇ—Շուտ արա :

ԳԵՂՈՒՇՑԱՆ—Ռոպեապես : (Աղջիկները զնում են) : Գեղօրգյանը հանում ե բանկոնը, շապիկն ու ջրի ծորակի առաջ լվացվում է ե՞ս, ինչ յարկ ե :

Մտնում են Գալոյան Տիգրանն ու Գասպար ամին : Վերջինս բարի դեմքով ու աշխույժ ծերութի յե : Հագներին տրեխներ ու չուխա : Տիգրանի ուսին Խուրջին, Գասպար ամին չիրուխով ու յերկար մեռնափայտով :

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—(Տիգրանի թեկից բռնած կանգնեցնում ե) : Կանգառ, Տիկո : Բալքա չի կարելի : Տենում չի՞ս, մարդը մինչի պորտը լողանում ա:

ՏԻԳՐԱՆ—Սրան ասում են Գեղօրգյուրուր, Գասպար ամի : Ակաչարա ընդունված դործ ար : (Բարձր) Բարեկ ձեզ, ընկեր :

ԳԵՂՈՒՇՑԱՆ—(Վերցնում ե պատից յերեսարքին ու յետ նայում) Բարեկ . . .

ՏԻԳՐԱՆՆ—Համայնակացարանն ըստեղ առ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Այո :

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ախոյորս վոր ասեմ, մեղ ստի դարկեց միլիցիան: Են, վոր գործարանի դռանն ա զարավուլ կանդնած: Գնացեք, ասում ա, կընդունեն...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Գշերն ուղում ենք դունագ մնալ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Ի՞նչ գործով եք, հայրիկ:

ՏԻԳՐԱՆ—Մենք, վոնց վոր ասում են, Բայանդրւրից ենք:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—(Ուրախացած) Աչա, մեր կոլխոզնիկները: Սոցմբցան...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Եղ ա, վոր կա: Առանց կասկածանքի: Տնական մարդ ենք: Թե պաշտպատ ուղում ես, կարստ հանի:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Վոչ մի թուղթ պետք չէ, հայրիկ ջան: Գլխներից վրա տեղ ունեք: (Հագնվում ե ու կանչում) Կարապետյան, Հովսեփյան:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Համ մի տես, ե: Կոները վոնց ա կերմրել: Պահ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Կարգն եղ ե, հայրիկ:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ղութ: Բա կաշիդ չի քերթվո՞ւմ:

ՏԻԳՐԱՆ—Ասում եմ քեղ Փեղկուլուր:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Դե վոր ըստենց ա, վնաս չունի: (Մտնում են Հեղուշն, Արփիկն ու Զարուհին):

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Մըցողներն են յեկել: Բայանդուրից:

ԱՐՓԻԿ—Այ, լավ են արել:

ՀԵՂՈՒՇ—Բարե ձեզ, ընկերներ:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Բարե, բարե, աղավնյակներս: Բայց մենք Տիգրանի հետ ենպես, ելի, վոչ իսկական...

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Այսինքն:

ՏԻԳՐԱՆ—Այսինքն, պետք ա ասեմ, վոր մըցակցական պայմանագիրն ստուգելու պատճամալորները Համ չեն եկել: Մենք դասպար ամու հետ ենպես... Պատահմամբ...

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Եղ ա, վոր կա—պատահմամբ: Յեկել ենք քաղաք զանազան գործերով: Ասի—մի մտնենք մեր բաննոր աղոց մոտ: Հենց գեղումն ել թամբահ արին, կոլխոզում: Ամին —կանդիպեք:

ՏԻԳՐԱՆ—Ի՞նչ ասեմ, —բոլորս ել հետաքրքիր ենք դեպի գործարանը:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Շատ ել լավ եք արել... (Հեղուշին ու Արփիկին) Գիշերելու տեղ պետք ե սարքել: Կարծում եմ, մեր սենյակում լավ կլինի: Ավելորդ մահակալներ կճարվեն:

ԱՐՓԻԿ—Ճիշտ ե, իսկ բարձեր մենք կընդունիք:

ՀԵՂՈՒՇ—(Գյուղացիներին) Նստեցեք, ընկերներ, թեյ խմենք:

ՏԻԳՐԱՆ—Շնորհակալ ենք:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ճանապարհից—դա ամենալավ գործն ա: Համա և խուզինս ու շուխեքը վո՞ր բան կարելի յա դնել:

ԱՐՓԻԿ—Գնանք, յիս ցույց կտամ: (Գյուղացիները Արփիկի ենա գնում են):

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Խմ կարծիքով, սրանք չատ տեղին են յեկել: Վաղը նրանց կտանենք գործարան: Են, ինչ վոր կուտակվել է մեղ մու—սրանց գալն ել ամելի պետք ե աղդիչ Առաջ: Դեպի արագ տեմպեր:

ԶԱՐՈՒՀԻՇ—Եղ ծերուկն ինձ չատ դուք եկավ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Խոկ ջահելն ինչո՞վ ե պակաս:

ԶԱՐՈՒՀԻՇ—Գործարիւմին պիտօք ե հայտնել նրանց մասին:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Խելացի խոսք ե: Գնա ու կատարիր: (Զարուհին դուրս ե գնում: Հեղուշն սկսում է քեյլ լցնել: Մտնում է ֆորգոմյանը):

ԹՈՐԳՈՄՅԱՆ—Վերջապես, ընկա ուր հարկն ե: (Գյուղով բարեվում ե):

ՀԵՂՈՒՇ—Բարի յերեկո, ընկ. Թորգոմյան:

ԹՈՐԳՈՄՅԱՆ—Կարեւոր գործով եմ: Ստիպված եմ յերկու խոսքով: Գործարան ևմ շտապում: Անկետայի ձեռով պատմեմ: Սարգիս Թորգոմյան: Քսան յոթ տարեկան: Հնոցավարի մղա: Տասնչորս տարեկանից աշխատել եմ գեղոյում: Սովորել եմ բանֆակում: Հետո ավարտել եմ բարձրագույն տեխնիքականը: Հիմա—ճարտարապետ եմ: Ընկերներ, ընդունեցնեք ինձ ձեր հանրակացարանի կոմունայում:

ՀԵՂՈՒՇ—Ուրախությամբ: Նախորդ յերաշխավորում եմ,—վոչ վոչ զեմ չի լինի: Մենք ձեզ լավ գիտենք:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Ճիշտ եք վարվում, ընկ. Թորգոմյան:

ԹՈՐԳՈՄՅԱՆ—Վատուռության համար չնորհակալ եմ: Ուրեմն, բարեկամանա՞նք: Ճիմտ արգեն կլինենք գուու: Ցանություն: (Արագ դուրս ենա գալիս դունից իմհացիք):

ԳԵՎՈՐԳՅԱՆ—(Բարձր): Դե, յեկեք, ընկերներ, ի՞նչ եք անում այլքան յերկար:

(Մտնում են Գասպար ամին, Տիգրանի և Արփիկը):

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—(Չեղում դեղին կարագ) Եկեք, եկեք, զուրբան: Կարագ ենք բերել: Կոլխոզական... Անպայման համը ահսեք:

ՀԵՂՈՒՇ—Առանձնապես եք պատրաստել:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ամենեին: Մենք ըստուց գենը մշտապես նման կարագ ենք ուտում:

ՏԻԳՐԱՆ—Առանց վորեւ խառնուրդի:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Առաջներում ուրիշ պլանի կարագ եր ստացվում: Մեր կոլխոզինը

ըտեսց չի, մաքուր ա: Տիկո ջան, բաժանի տենանք: Զար-
մանալի աչքի չափ ունի մեր Տիգրանը: Կոլխոզում ընենց
ա բաժինք անում, վոր կասենաս թե հիվանդանոց ըլի:
(Ծիծաղում ե):

ԱՐՓԻԿ—Թեյլը իմեր, կասով:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Խմիր, Հայրիկ, ճանապարհից ես:

(Գասպար ամին քեյը լցում է ափսեյի մեջ ու այնպես
խումած):

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—(Թորգումին) Հարցնելն ամոթ ըլինի, դու ի՞նչ փե-
շակի յես զավողում:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Դարբին եմ:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—(Զարթացած) Պահ, բա եղ վո՞նց ա, վոր քիթ ու
մոռթդ մրուտ չի, ըսենց թամուղ ես: (Տիգրանին): Մեր
Մուլքայիլի որումը չի: (Բոլորին) Խոսք չունեմ, մեր Մու-
քայելը լավ դարբին ա: Համա եղ անիրավը զուրում մրու-
տ: Ծննդականից ա, տառմ ա: Ձեռքը սապան չի վերցնի:
Լվացվելու հետ դրսի չունի: (Ծիծաղում են) Դուք ի՞ւ եք
աշխատում, աղջկերք:

ԱՐՓԻԿ—Այս: Ցես փականապործ եմ:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ի՞նչ:

ԱՐՓԻԿ—Փականապործ: Սլեսար:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Սլեսա՞մ՞ր: Այ քեզ տղամարդ աղջիկ:

ՀԵՂՈՒԾ—Իսկ յես ձուլցար եմ:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Դա ի՞նչ փեշակ ա:

ՀԵՂՈՒԾ—Մեքենայի զանազան մասիր եմ ձուլում: Հալում եմ,
հետո Փորմը թափում:

ՏԻԳՐԱՆ—Շատ հետաքրքրական ա: Մի տեսայինը եղ գործաբանը:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Բաս ի՞նչ... Պետք ա տենալ, թե ի՞նչ զայդի յեն
սարքում մեր սերմագտիչները ու շարքացանները:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Բոլորը ցաւց կտանք, Հայրիկ:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Հայրիկությունից անցել եմ: Վազուց ի վեր սպազ
եմ: Ինը թու ունեմ: Սաղ ուերգաստանով կոլխոզ ենք
մտել: Իսկ Տիկոն... Տիգրան, Փալոյանը մեր կոլխոզի զե-
կագար մարմիններից ա: Միաձայն բնարկեցնք, քանի վոր
քյալով ա:

ՏԻԳՐԱՆ—(Ամաջկու) Գասպար ամի, դա գործին չի վերաբերում:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ասանց քաշվելու: Սա խոսակցության մեջ մի քիչ
յայան ա, համա զործի վախտ վո՞նց վոր մի սպաժար:
Կրակ ա տեղովը: Թվական տվյալները բերան ա անում:
Ե՛, իրար հետ տեսնիցնք, ճանաչ յեղանք: Հիմա կարե-
լի ա և բաց սրբով խոսա: Ով ի՞նչ իմանում ա, թող ասի:
Ի՞նչ եք ասում, մե՞նք սկսենք:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Խոսացեք:

ՀԵՂՈՒԾ—Խնդրում ենք:

ԱՐՓԻԿ—Լուս ենք:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Տիկո ջան, դակլաղ արա:

ՏԻԳՐԱՆ—Ընկերներ, մենք մեր կոլխոզի մասին, իհարկե, կարանք
ամեն բան ասել: Ինչ եմի ուզում... Հա, կոլխոզնեկներն
աշխատել են զոր ու գիշեր ու մեծ հաջողության մեջ են:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ճշմարիտ խոսք ա:

ՏԻԳՐԱՆ—Բայց քանի վոր ձեր գործաբանը մըցման մեջ էք մտել
ամբողջ շրջանի հետ, սրտներս մի քիչ հանդիսաւ չեր,
չինի՞ մտածում եյինք, մյուս կոլխոզները մեզ հաղթում
են: Հարցում արինք շրջորդկոմին: Ենաեղից հայտնեցին,
թե զործներդ չատ հաջողակ ա: (Համում ե, գրպանի
տեսքը):

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Գանդպավելու խոսք չունենք:

ՏԻԳՐԱՆ—Շրջանում առաջալոր տեղը կոլխոզներն են բոնում:
Նմանապես և մերը:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—(Վողեվորված) Մերն առաջին տեղն ա բանում:
Բայս: Ի՞նչ կարիք կա թաղցնելու: Ճշմարտություն ա:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Դրուստ ե, Գասկար ամի:

ՏԻԳՐԱՆ—Ամբողջ շրջանի թվերը ցույց են տալիս՝ գարնանցանի
տարածությունն ավելացել ե 30 տոկոսի, ինկ աշնանա-
ցանը 62 տոկոսով:

ԱՐՓԻԿ—Սկիզբը վատ չե:

ՏԻԳՐԱՆ—Սա վերջին սերմանման կամպանիայի ընթացքում կազ-
մակերպված ա 44 նոր կոլխոզներ և աշխատանք ա տար-
կում ուժեղացնելու յեղածները: Ահա զիխալոր կետերը:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Ամուր և ձեվկում:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Բու ասա—Հիմնավոր ա կարած: Վոչ յերազ ա մոչ
ե չեքիաթ: (Ծիծաղում ե):

ՏԻԳՐԱՆ— իսկ գործարաններում ինչեր են կատարվում: Վոր
կարգում ես—քեփդ գալիս ա:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Հա, Հա: Վո՞նց մարդու քեփը չեա: (Հանկարծ
հիշելով) Այ, քիչ մնաց մտիցս փախչեր: Եղ ի՞նչից ա,
վոր վերջերիս տրակտորի պակաս ա զգացքում: Հը:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Պահանջը շատ ե, արտադրությունը չի հասցնում:
Սա ժամանակակիր յերեկույթ ե:

ՏԻԳՐԱՆ—Բա վո՞նց ե լինելու:

ԳԵՎՈՐԳՅԱՆ— Յեղասյուներ կտղմակերպեցնեք: Իսկ յեթե ձի ու-
նեք, նույնական գրեք գործի:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ռեմեն գյուղատեսը դրուստ եր ասում: Դե,
հեմի զու դակլաղ արա, անուշ ախալերս:

ԳԵՎՈՐԳՅԱՆ—Զեղ հետ կնքած պայմանագիրը մեր գործարանը
կատարել ե լրիվ: Մի քիչ ել ամելին:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Այ, դրա համար չնորհակալ ենք:
 ՏԻԳՐԱՆ—Իսկապէս:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ—Մոտ ապագայում դուք կարող եք սպասել ավելի
 մեծ հաջողություններ...
 ԶԱՐՈՒՀԻ—(Ներս և վագում) Բնկերներ, գործարկումի նախադահը
 մեղ մոտ եւ դալիս: Նա ասեց, զոր միլիցիան գողերի հետ-
 քը գտել ե:
 ԱՐՓԻԿ—Ոչո, այսուղ ել մենք ենք հաղթում:
 ԳԱՍՊԱՐ ԱՄԻ—Ի՞նչ ա, չըլի՛ ձեղ նեղացնում են:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ— Այո, կեղասոտ զրվարտություն ե:
 (Մտնում ե Սեխոյանը: Եմբում կանգ ե առնում: Հար-
 բած ե, նոնդում ե):
 ՍԵԽՈՅԱՆ— (Զարուհուն) Հրեցիր ինձ սանդուխքների վրա ու
 առանց մի ներողություն... Տգեղ ե, անկուլտուրական...
 ՀԵՂՈՒԾ—Եղ ի՞նչ ե, Սեխոյան, հարրա՞ծ ես:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ—Այ, դա գեղեցիկ ե, կուլտուրական:
 ԱՐՓԻԿ— Ամոթ ե, Սեխոյան:
 ՍԵԽՈՅԱՆ— Ինչ հարձակվեցիք ամեն կողմից: Յես հարբած չեմ,
 խմել եմ մի քիչ... Հանդիսավոր դեկրի ստթիվ: Նոր
 հարվածային բրիդադայի... Կարո Սարգսյանի բրիդա-
 դան ենք չնորհավորել:
 ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Ձեղ մոտ զայդեն ըտե՞նց ա:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ— Վոչ, վոչ: Եստեղ մի խաղ կա: Խայտառակու-
 թյուն ե:
 ՍԵԽՈՅԱՆ— Կարգին խոսիր, Գելորդյան: Դու վաչինչ չես հա-
 կանում:
 ՀԵՂՈՒԾ— (Կրակու) Իոկ! դու հասկանո՞ւմ ես: Բաշկահան չե,
 վոր ինքը գլորվել ես, ընկերներիդ ել ես ուզում հետդ
 քարշ տաս: Քո բրիդադան ուզում ես քայքա՞յել:
 ԱՐՓԻԿ— Կամ կարծում ես, թե հարբած բրիդադան հարվա-
 ծայինց լա՞վ ե:
 ՍԵԽՈՅԱՆ— Ի՞նչ եք ճճջում: Յես իմ հերթը բաց չեմ թողնի:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ— Ներողություն: Մոտ չեն թողնի: Հարբածը ստա-
 նոկի հետ գործ չունի:
 ՍԵԽՈՅԱՆ— Չեն թողնի, կարող են իրենք աշխատել:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ— Գնա քնիր: Հետո կխոսենք:
 ՍԵԽՈՅԱՆ— (Չեղքը քակի ե տալիս) Ա, ձեր հերն ել անիծեմ:
 (Դուրս ե գալիս: Դուն մեջ դիպչում ե նահապետյանին:
 Վերջինս զարմացած նայում ե նրան, լուր քափահարում
 գլուխն ու ներս մտնում):
 ԳԵՎՈՐԳՅԱՆ— (Նահապետյանին) Տեսնո՞ւմ ես: Կարո Սարգսյա-
 նի հետ ե լակել:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ— Տեսնում եմ: Վոչ միայն դա յեմ տեսնում: Ու-
 րիշ կերպ պետք ե գործել:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ— Հասկացար, վերջապէս:
 ԱՐՓԻԿ— Էնկ. Նահապետյան, մենք հյուզեր ունենք:
 ՆԱՀԱՊԵՏՅԱՆ— Գիտեմ, գիտեմ: Բարեկ ձեզ, ընկերներ: Խընդ-
 բում եմ ներկա լինեք ցեխային բյուրոների նվատին: Հա-
 տուկ ձեզ համար եմ յնկել:
 ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Մենք պատրաստ ենք: (Տիգրանին) Տես, Տիգ-
 րան, ժողովականների ստաջ սեվերես դուրս չգաս: Կը-
 խոսեմ, վոճաց վոր պետքն ա:
 ՏԻԳՐԱՆ— Արխային կաց, յուլա կտանենք:
 ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Ալլրես: (Բոլորին) Մի բան կուզեմ հարցնել: Ու-
 րեմն, գեռ կամ ձեր միջին աննամուսներ, վոր անսեղի
 ստեր են դուքս տալի ու աշխատանքը սարխոչության
 փոխում:
 ՀԵՂՈՒԾ— Կան դեռ, Գասպար ամի:
 ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Պատահում ա, վոր ուրիշ ֆանդով ել գործը խան-
 դաբում են, հը^o:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ— Եղ ել պատահում ե, Գասպար ամի: Վոտք են
 բռնում, բյուրոկատիզմ են չաղացնում:
 ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Կնշանակին, չպետք ա լոենք: Բնդհանուր ա գոր-
 ծը: Ճշմարիտ չե^o:
 ՆԱՀԱՊԵՏՅԱՆ— Անպայման խոսեցնք:
 ԳԵՎՈՐԳՅԱՆ— Յեվ մի լրակ կոթոցով:
 ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Վոր ըստենց ա, մեր պայմանի կետերով ենք ժաժ-
 կալու: Տիկո, Հյա մի տես վրոնց ա նշանակված գործա-
 րանի առաջին կետում:
 ՏԻԳՐԱՆ— (Կարդում ե) «Հասաւատ լինելով պրոլետարական խոս-
 քին, տալիս ենք մեր հեղափոխական խոստումը՝ վոչ մի-
 այն կատարել ծրագիրը լրիվ, այլ և ավելացնել արտա-
 դրանքը»:
 ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Եղպես, Եղպես: Բոլորդ, ընկերներ, խոստացել
 եք: Կատա՞րել եք լրիվ: Վոչ: Ի՞նչու: Ո՞վ ա եղ խանդա-
 բում— Ալնքից բռնած, ընկեր մեյլան: Թող պատասխան
 տա: Բառ: (Գնում են):

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Խ. Յ. Յ.

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Գործարանային ակումբի փոքրիկ սենյակ: Յերկու դռւունիսը—դեսի դահլիճն: իսկ խորքինը—դեպի միջանցքը: Պարզ, հասարակ կահավորում: Պատերին հեղափոխական գործիչների նկարներ ու զանազան լոգութեաններ և դիմումները: Քեմաւմն են Հեղուշը, Արքիկը, Զարուհին և Սեյսյանը: Վերջինն անվարական զգեստով:

ՍԵԽՈՅՑԱՆ— (Վրդովված) Խոսք եմ տալիս, եւ յերեք չէ կրկնվի: Կարծում եմ, թե ուղիղ եմ զնում: Կարվեցի ընկերներից: Ինք ինձ չենի դանում: Ինչ վոր կեղեցիկ կյանք եյի փնտում...

ՀԵՂՈՒՇ— Գիտու շի մեջ եյիր ուղում դանել:

ՍԵԽՈՅՑԱՆ— Բացելիրաց խոսումվանվում եմ: Նոր եմ Հասկացել, թի վոնց պետք եւ ապրել: Մրցելու յիմ:

ՀԵՂՈՒՇ— Այ, եղան, Սեխոյան:

ԱՐՓԻԿ— Եւ չայթաքես:

ՍԵԽՈՅՑԱՆ— Վոչ, վոչ: Ուզում եմ ամբողջ ժողովի առաջ իմ մասին խոսել: Ե՞խ, ուղղակի անհամբերությամբ սպասում եմ, թե յի՞ր պետք ենորից բանիոր դառնամ: (Բոլորն ել զնում են: Միջանցքից ներս են մտնում գերոզյան, Գաապար ամբն և Տիգրան):

ԳԵՎՈՐԳՅԱՆ— Ընդմիջումը դեռ չի վերջացել: Զենք ուշացել:

ԳԱՐԳԱՐ ԱՄԻ— Յաման ճարպիկն ենք, Հա՛: Ժամանակ ճարինք ու ման եկանք սաղ զավադը: (Խառում ե) Ո՛Փ, Հալից ընկանք: Տիկո ջան, նստիք, բեղարած կլինես: Ականջներս դողուում են գործարանի դալմաղալից: Աչքերս ել մթընդում են:

ԳԵՎՈՐԳՅԱՆ— Սովոր չես —դրանից ե: Դարբնոցի ու Հալոցի մարիֆաթն ե:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Հենց եղ ա, վոր կա: Մեկ փայլկառում ա, մեկ եկ տեսար—վորոտաց: (Ծիծաղում ե) Ախր, Հալա մի մտածեք. ման ա գալի հնձող մեքենան զաշտով մին ու փոցիսի առամներով թափ տալի: Վոնց վոր մի ծիծեռնակ: Մաքուր հագնված Հարսի պես: Բակի մտիցդ եւ չի անցկենա, թե

եղ զաշանդ մաշինը դուս ա դալի ես դժոխային դարբնուցից:

ՏԵՂՐԱՆ— Խրատական տեսարաններ եյին:

ԳԵՎՈՐԳՅԱՆ— Կարծեմ, ամեն բան ցուց տվի ձեղ:

ՏԵՂՐԱՆ— Անկասկած: Քիչ մնաց նույնիսկ զավոքի արուբաների վրա սովորինք:

ԳԱՍՊԱՐ ԱՄԻ— Այսու ս Տեսանք ու լսեցինք: Գեղումը բաղի խոսում են առանց մատածելու՝ բանվորների գործը դուրս չալայ ա: Վոնց չեղուց պարզ ա: Հետ մի մարի գարբնոցն ու համաձուգունը լցուր ամանից—աման, են վախու կիսուամ: Սաքեզ համար թանով սպաս չի: (Ծիծաղում ե):

ԱՐՓԻԿ— (Մտնում ե) Ժողովը սկսվում է, ինդընմ ներկա լինեք: (Բոլորն անցնում են դահլիճն: Միջանցքից գալիս են 1-ին և 2-րդ յերթասարդներն ու ուղեգործում դեպի դահլիճն: Նրանց հետեւլից ներս ե վագում կարս Սարգսյանն ու կանգնեցնում յերթասարդներին դահլիճի շեմքի առաջ):

ԱՄՐԴՅԱՆ— Նորից եմ կրկնում, չէ Համաձայնվեք:

1-ԻՆ ՅԵՐԻՑԱՍԱՐԴ— Զես վախեցնի: Գնում ենք խոսառվանվելու պրծալ:

ԱՄՐԴՅԱՆ— Յես ձեզ ցույց կտամ: (Բոլորն ապառն ե):

2-ՐԴ ՅԵՐԻՑԱՍԱՐԴ— Վազն արի: (Մտնում են դահլիճն և ծածկում դրույք):

Սարգսյանն անհանգիստ, տարտամ շարժումներ և անում: Հետո մոսենում ե դահլիճի դրանն ու ականջը դրած, լըսում ե: Միջանցքից տանող դրաւը կիսարաց ե):

ԱՄՐԴՅԱՆ— (Թքում ե) Թքու, սպատան տանի:

(Միջանցքի դրան մեջ յերեխում ե Վարպետյանը):

ՎԱՐՍԶՅԱՆ— (Հարցական) Կարո՞:

ԱՄՐԴՅԱՆ— (Հանկարծակիի յեկած—հետ ե քոչում դոնից) ԱՌ:

ՎԱՐՍԶՅԱՆ— Ինչո՞ւ այսուղ չես: (Ցույց ե տալիս դեպի դահլիճը):

ԱՄՐԴՅԱՆ— Բնեկ: Վարադյան...

ՎԱՐՍԶՅԱՆ— (Մուտենալով) Ի՞նչ կա:

ԱՄՐԴՅԱՆ— Դժվել են բոլորը: Են յերկու աղանձերը զնացին, վոր խոսումվանին, թե ինչպես են ծեծել Արփիկի Հովսեփյանին: Իհարկե, ինձ ել կիսառնեն, վոր իրատ եմ ամիել:

ՎԱՐՍԶՅԱՆ— Դո՞ւ, Մի՞թե:

ԱՄՐԴՅԱՆ— Ենակն ելի, թե իմ կերպով:

ՎԱՐՍԶՅԱՆ— Վո՞նց կարող են ապացուցել:

ԱՄՐԴՅԱՆ— Հմ... Ախր յես եյի աղջիկների մասին վոտանագործ պարզունակ կապացներին վակցնողը: Սա հե՞տ Անդամանին կապացուցեն:

ՎԱՐԴՎՅԱՆ — Այս . . . Դրաւթյունով ենքան ել լավ չե՞ :
ՍԱՐԳՄԵԱՆ — Զերն ել, ընկ. Վարազյան, փափռուի ե :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Այսինքն :
ՍԱՐԳՄԵԱՆ — Հիշո՞ւմ եք, յես կաղմել եյի հայտարարություն
միլիցիային, գործիքների գողությունն առջիկների վրա
դցելու համար :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Հետո՞ :
ՍԱՐԳՄԵԱՆ — Դուք ել ձեր սեփական ձեռքով մի քանի ուղղումներ
մացրիք սեփակառության մեջ :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — (Աթեանցիս) Հետո՞ :
ՍԱՐԳՄԵԱՆ — Հետո են, վոր ձեր ձեռապէրը բոլորին հայտնի
յե՞ : Եդ սեփառությունը պահել եյի, ենուս, ելի, հիշա-
տակ : Բայց մի որ ձեռքե-ձեռք անցավ, գնաց գործարկոմի
մոտ, ենուղից ել հիմա հասել ե ես դահլիճը :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Զե՞ վոր դու խոստացար սեփակառությունը ճղել:
վո՞նց ընկալ նրանց ձեռքը :
ՍԱՐԳՄԵԱՆ — Երեկով զրապանից ընկել ե, չեմ նկատել :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Պետք ե զգուշացրած լինելիր ինձ :
ՍԱՐԳՄԵԱՆ — Ո . . . Ո եկը կարծես ման և զայիս : (Թռչում ե
ու ամուր ծածկում միջանցի դուռը : Մեխանիկական փա-
կը ըթիկում ե ու փակում դուռը) : Այ քեզ ոյին, դուռը
փակվեց : (Փորձում ե բանալ, չի խաղողվում : Նույնը՝ և
վարացյանին) :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Ընկանք թակարդը : (Զայրացած) Ախմա՞ի :
ՍԱՐԳՄԵԱՆ — Խնդրեմ առայց հայցոյանքի : Յես ել գիտեմ կարգը :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Այս վո՞նց դուրս գանք եստեղից, Հը՞ :
ՍԱՐԳՄԵԱՆ — (Դեպի դահլիճն) Եդ գոնով :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Ի՞նչ ե, ծիծառում ես :
ՍԱՐԳՄԵԱՆ — Ամենելին : Զեղանից չատ ինքս ևմ ուղում ճղել:
Դուք Հենց են կողմն եյիք զնում :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Այս, զնում եյի . . . Զեյի կարծում, թե դու բաց բե-
րանի մեկն ես :
ՍԱՐԳՄԵԱՆ — (Կոպիտ) : Դե, դե, կարգին : (Վարազյանը հաշվում
է լուսաւում մոտ) : Սարգյանը դահլիճի դրահից ականց ե
դուռ) : Ահա, իմ մասին են խոսում . . . Զեղ ել հիշեցին,
ընկ. Վարազյան : (Վարազյանը զդային հայում ե) Կա-
ժաց : (Վարազյանը նասում է արողին) : Նորից իմ մասին :
Շան վորդիք : Հենց եսոր կթողնեմ գործարանը : Նոմերս
չանցավ : (Ականց ե դուռ) Բանաձել են կարդում գործա-
րանի մասին : Թյո՛ւ, չի լսում : Եշի մեկը յեկավ ու կանդ-
նեց ծակի առաջ : (Դահլիճից լսվում են ծափնք) :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Այ քեզ հիմար դրություն :

ՍԱՐԳՄԵԱՆ — Եելոք վոր լինելինը, — չեյինք ընկնի : Լսո՞ւմ եք, —
ծափահարում են : Վերջանում ե :
(Դահլիճի դուռը բացվում ե : Յերկուսն ել կծկված քաշ-
վում են մի անկյուն) :
ՔԱՐԴՎՅԱՆ — ԶԱՅՆԸ — Մի քանի խոսք ել, ընկերներ : Աւելցել ենք
լուրջ գժվարություններ, բայց միշտ ել բանվորների կամ-
քը հաղթել ե : Բանի առաջ գնանք, ենքան լավ կլինի :
Շնորհավորում եմ մեր հարվածային գործարանը :
(Ծափնք, ձայների առանձին բառեր) :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Կմոնեն ու միասին կտեսնեն յերկուսիս :
ՍԱՐԳՄԵԱՆ — Զեզ մենակ զմնելին, — ավելի լավ եր :
(Դահլիճի դուռը լայն բացվում ե : Մտնելու են՝ Գասպար
ամին, Տիգրանը, Գեվորգյանը, Նահապետյանը, Ար-
փիկը և Հեղուշը : Մի քանի բանվոր բանվորուհիներ) :
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ — (Վոգեվորիած) Տեսո՞ւմ ես, ինչեր ե կատար-
վում, Տիգր, Հը՞ :
ՏԻԳՐԱՆ — Լիառատ ընթացքով վոնց վոր :
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ — Հենց եղ ե, վոր կա : Մարդու քեֆը ուալիս ար-
ժագան աշխատանք ու յեռանգ : Ոլսա՛յ : Կեցցե՞ն ու-
ղերքը : Ոլսա՛յ :
ԱՐՓԻԿ — Գասպար ամու քեֆը յեկել ե !
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ — Կդա, բաս ի՞նչ կանի :
ՆԱՀԱԳԵՏՅԱՆ — Տեսեք, մենք սրանց ենտեղ եյինք սպասում,
մինչեռ ես սենյակում թաղնվել են :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Յես առհասարակ չեմ հասկանում : Յես ի՞նչ կազ-
ունեմ : Ինչ վոր գործերի մեջ են խառնում : Խայտառա-
կություն ե :
ՆԱՀԱԳԵՏՅԱՆ — Միք վոգեվորվի, քաղ. Վարազյան : Զեր բացա-
տրությունները պետք կդան ժողովարանում :
ԱՐՓԻԿ — Ենտեղ կսովորեցնեն, թե կարելի՞ յե խայտառակել բան-
վորուհիներին :
ՎԱՐՄՅԱՅԱՆ — Ավելորդ եմ համարում արդարանալ : (Արագ հե-
ռանում ե) :
ԱՐՓԻԿ — Ավելորդ, թե ինչ, — բայց չես արդարանա :
ԶԱՅՆԵՐ — Ճիշտ ե : (Սարգյանի ուզում ե դուրս ծլկել, բայց
Գեվորգյանը կտրում ե նախապարհը) :
ԳԵՎՈՐԳՅԱՆ — Սպասիր, Սարգյան : Գասպար ամին քեզնով շատ
ե հետաքրքրում : (Գասպար ամուն) Սա՞յ :
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ — Հենց ինքն ա: Թեյել վոր առանց միրուքի յա :
Ճանաչում Ե՞ս, Տիգր :
ՏԻԳՐԱՆ — Անզայման : Կարո Սարգյանն ե :
ԳԱՍՊԱՐ ԱՄԻ — Մի գլուխ լսում եմ՝ Սարգյան, ևս Սարգյան :

Ենքան Սարգսյան կա վոր, —ո՞վ ա իմանում: Հենց վոր
տեսա, —ասի ենա վոր կա, —մեր Սարգսյան ա: Մեր
դեղից:

ԴԱՐԳՍՅԱՆ — (Կոպիտ) ի՞նչ ես ուզում:

ԴԱՍՊԱՐՄ ԱՄԻ — Դու մի՛ տարանա: Քո գեղից ենք, հետեւս փա-
փուկ ժաժ արի: Քեզ բարեվ չեմ բերել, բայց քո տանե-
ցոց մասին կարած տեղեկանք առալ: Յերկու որ առաջ
չորդ զաֆասի մեջ զրին: Կուլակ է, հացը թագցրել եր ու
քայսիք Կուրղինի զոմն ել կրակին տվել:

ՏԻԳՐԱՆ — (Բացարում ե բոլորին) Եղ Կուրղինը, վոր կա, —կոլ-
խողի բարեկամն եր:

ԴԱՍՊԱՐՄ ԱՄԻ — Ես վո՞նց ա, վոր վաղուց գեղ չես դալի, հը:

ՏԻԳՐԱՆ — Գյուղթղթակցի աչքը վոր Փչացրեց, —անհետացալ
դեղից:

ՄԱՐԳՍՅԱՆ — Ի՞նչ եք կպել: Սուս միք փէի: Զեղ չեմ ել ճանա-
չում: Թողեք: (Հրով ե և փախչում):

ԳԵՎՈՐԳՅԱՆ — Կանդնիր, հեռու չես փախչի:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ — Միք թողնի փախչելու: (Վազում են հետվից դե-
պի դակին):

ԱՐՓԻԿ — Այ քեզ բանվոր-պրոլետար:

ՀԵՂՈՒԾ — Գարշե՛լի:

ԴԱՍՊԱՐՄ ԱՄԻ — Եղպէսիների տեղը զավուրը չի:

ԶԱՐՈՒՀԻՄ — (Մտնում ե) Յերկու միլիոններ կարոյին են հար-

ՀԵՂՈՒԾ — Տեղին են յեկել, թող անցնեն դահլիճը:
(Մտնում ե Սեյսոյանը):

ՄԵԽՈՅԱՆ — Մեր ցեխից դողացված դործիքները դուել են: Իս-
կութպան Վահանի մոտից: Սառամ է, վոր կարո Սար-
դայանն ե ծափել:

ԱՐՓԻԿ — Յես եկուս ել դիտեյի: (Մտնում ե Գեվորգյանը):

ԳԵՎՈՐԳՅԱՆ — Կերջացրինք կեղտու դործը: Մեր թանգարին
Կարոյին հանձնեցինք միլիցիային ի պահ: (Մտնում են
Բաղարյանն ու Կահապետյանը)

ՀԵՂՈՒԾ — Գնանք:

ԴԱՍՊԱՐՄ ԱՄԻ — Սպասիր, անուշիկս: Ասեմ, վոր լեզվիս վրա չը-
մնա: (Բոլորին) Մնաք բարով, ընկերներ: Ավելապական
Հալալ արեք: Ենքան ենք դոհ ձեղանով, վոր խոսք չենք
դանում ասելու:

ՏԻԳՐԱՆ — Վոչ մի խոսք չենք դանում:

ԴԱՍՊԱՐՄ ԱՄԻ — Հիմա դուք յեկեք մեղ մոտ հանդստանալու: Մի
քիչ ել կսովորացնեք: Ուրախ կլինենք:

ԱՐՓԻԿ — Կաշխատենք:

ԲԱԴԱՐՅԱՆ — Շնորհակալ ենք, Գասպար ամի:

ԴԱՍՊԱՐՄ ԱՄԻ — (Վոգեվորլած) Իսկ քեզ, սիրելիս, անպայման
մեր կոլխոզը կանչենք աշխատելու: Քեզ պես ուժն ան-
հաժաժած է կորխոզում: Դործունյա տղա յես, նմանապես
և դարրեին:

ԴԵՎՈՐԴՅԱՆ — (Ժպում ե) Լավ, կպամ, բայց մի պայմանով,
վոր յեթե կարիք յեղալ—քեզ, Գասպար ամի, կոլխոզից
գործարան տեղափոխենք: Համաձայն եմ: Այ-
քեզ դյուղի և քաղաքի կապը:

ԴԱՍՊԱՐՄ ԱՄԻ — (Ուրախ) Ի՞նչ կա վոր: Կարծում ես կվակիենա՞մ:
(Մեկնում ե ձեռքը Գեվորգյանին) Համաձայն եմ: Այ-
քեզ դյուղի և քաղաքի կապը:
(Բոլորը ծիծաղում են ու ծափահարում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Յ Ր

ՀՀ Ազգային գրադարան



NL0328553

38

ԳՐԱ 25 ԿՈՊ (2 գ)



УДАРНИКИ

Пьеса в 4 к.

Госиздат ССР Армении
Эреван - 1981

2004